ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՄԱՆ ԱՐՍԵՆԻ ԲԱԲԱԽԱՆՅԱՆ

# ՔՐԵԱԿԱՆ ԵՆԹԱՄՇԱԿՈՒՅԹԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

**ԺԲ.00.05 մասնագիտությամբ - «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք»
մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2025

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

АРМАН АРСЕНОВИЧ БАБАХАНЯН

# УГОЛОВНО-ПРАВОВЫЕ ВОПРОСЫ БОРЬБЫ С КРИМИНАЛЬНОЙ СУБКУЛЬТУРОЙ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

АВТОРЕФЕРАТ

**диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.05 – "Уголовное право и криминология, уголовно-исполнительное право"**

ЕРЕВАН-2025

**Ատենախոսության թեման հաստատվել է**
**Երևանի պետական համալսարանում**

**Գիտական ղեկավար՝** իրավ. գիտ. թեկ., դոցենտ
**Տիգրան Վիգենի Սիմոնյան**

**Պաշտոնական ընդդիմախոսներ՝** իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
**Սերժիկ Սերգեյի Ավետիսյան**
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ
**Միսակ Մերուժանի Մարկոսյան**

**Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ Արդարադատության ակադեմիա**

Պաշտպանությունը կայանալու է 2025 թվականի դեկտեմբերի 17-ին ժ. $14^{30}$-ին ՀՀ ԲԿԳԿ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2025 թվականի նոյեմբերի 14-ին:

**Մասնագիտական խորհրդի գիտական**
**քարտուղար, իրավ. գիտ. թեկ., ասիստենտ** **Ժ. Ա. Ստեփանյան**

**Тема диссертации утверждена в**
**Ереванском государственном университете**

**Научный руководитель:** кандидат юридических наук, доцент
**Тигран Вигенович Симонян**

**Официальные оппоненты:** доктор юрид. наук, профессор
**Сержик Сергеевич Аветисян**
кандидат юрид. наук, доцент
**Мисак Меружанович Маркосян**

**Ведущая организация:** **Академия юстиции РА**

Защита состоится 17 декабря 2025 года в $14^{30}$ часов на заседании Специализированного совета КВОН 001 по юриспруденции при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 14 ноября 2025 года.

**Ученный секретарь специализированного совета:**
**кандидат юридических наук, ассистент** **Ж. А. Степанян**

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Ատենախոսության թեմայի արդիականությունը:** Քրեական ենթամշակույթը՝ որպես սոցիալական երևույթ, Հայաստանի Հանրապետությունում ունի բազմամյա պատմություն, որի ընթացքում այն, ենթարկվելով որոշակի փոփոխությունների, շարունակում է պահպանել իր գոյությունը և դեռևս չի զիջում իր դիրքերը՝ տարածված լինելով հասարակության տարբեր շերտերում:

Հայաստանյան հասարակության վրա քրեական ենթամշակույթի ազդեցությունը, դրա դրսևորումների բազմազանությունը և տարածվածությունը վկայում են քրեական ենթամշակույթի դրսևորումների վտանգավորության բարձր աստիճանի մասին, ինչն էլ հիմնավորում է քրեական ենթամշակույթի դեմ արդյունավետ իրավական պայքար մղելու գործում, ի թիվս այլնի, քրեաիրավական գործիքակազմի կիրառումը:

Նման պայմաններում, «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2020 թվականի հունվարի 22-ի թիվ ՀՕ-87-Ն Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ նաև՝ 2020 թվականի հունվարի 22-ին ընդունված Օրենք) 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում (այսուհետ նաև՝ նախկին Օրենսգիրք), ի թիվս այլնի, նախատեսվեցին քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ տալու կամ ստանալու կամ պահպանելու, քրեական ենթամշակույթ կրող խմբավորում ստեղծելու կամ ղեկավարելու, քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը մասնակցելու կամ ներգրավելու, քրեական ենթամշակույթ կրող խմբավորման մասնակցին կամ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձին դիմելու հանցակազմերը (նախկին Օրենսգրքի 223.1-223.4-րդ հոդվածներ): Նախկին Օրենսգրքով նախատեսված, վերը թվարկված հանցակազմերը որոշակի փոփոխություններով տեղ են գտել նաև ներկայումս գործող, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (այսուհետ նաև՝ գործող Օրենսգիրք) 322-325-րդ հոդվածներում:

Վերը թվարկված հանցակազմերը նախատեսելուց հետո պետությունը սկսեց քրեաիրավական գործիքակազմի կիրառմամբ ակտիվ պայքար մղել քրեական ենթամշակույթի ներկայացուցիչների դեմ, ինչի մասին են վկայում ստորև ներկայացված վիճակագրական տվյալները:

Այսպես, քննարկվող հանցակազմերի նախատեսումից մինչև 2024 թվականի սեպտեմբերի 1-ը գրանցվել է նախկին Օրենսգրքի 223.1-ին

հոդվածով նախատեսված հանցագործության 6 դեպք, 223.2-րդ հոդվածով նախատեսված հանցագործության 10 դեպք, 223.3-րդ հոդվածով նախատեսված հանցագործության 6 դեպք, 223.4-րդ հոդվածով նախատեսված հանցագործության 4 դեպք, գործող Օրենսգրքի 322-րդ հոդվածով նախատեսված հանցագործության 6 դեպք, 323-րդ հոդվածով նախատեսված հանցագործության 12 դեպք, 324-րդ հոդվածով նախատեսված հանցագործության 18 դեպք, 325-րդ հոդվածով նախատեսված հանցագործության 9 դեպք:

Նախկին Օրենսգրքի 223.1-րդ հոդվածով քրեական հետապնդման է ենթարկվել 5 անձ, 223.2-րդ հոդվածով՝ 4 անձ, 223.3-րդ հոդվածով՝ 10 անձ, 223.4-րդ հոդվածով՝ 7 անձ, գործող Օրենսգրքի 322-րդ հոդվածի 1-ին մասով՝ 8 անձ, 323-րդ հոդվածի 2-րդ մասով՝ 2 անձ, 324-րդ հոդվածի 1-ին մասով՝ 14 անձ, 325-րդ հոդվածի 1-ին մասով՝ 11 անձ[1]:

Քննարկվող հանցակազմերով քննվող քրեական գործերով մեր կողմից հայտնաբերվել է նաև երկու դատավճիռ, որոնք դեռևս օրինական ուժի մեջ չեն մտել: Այսպես, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2024 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ ԵԴ1/0438/01/24 դատավճռով Վ.Ա.-ն արդարացվել է գործող Օրենսգրքի 323-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով, Մ.Շ.-ն արդարացվել է գործող Օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով, իսկ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2024 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ ԵԴ1/0551/01/24 դատավճռով ճանաչվել և հռչակվել է Ա.Ղ.-ի անմեղությունը գործող Օրենսգրքի 322-րդ հոդվածի 1-ին մասով:

Չթերագնահատելով պետական իրավասու մարմինների գործադրած ջանքերը՝ քրեական ենթամշակույթի դեմ քրեաիրավական պայքար մղելու գործում, պետք է, այնուամենայնիվ, արձանագրել, որ վերը մեջբերված վիճակագրական տվյալները վկայում են այն մասին, որ հայաստանյան հասարակության տարբեր շերտերում քրեական ենթամշակույթի տարածված լինելու պայմաններում քրեական ենթամշակույթի դեմ քրեաիրավական պայքարն այսօր չի կարելի անվանել հաջողված, ինչի պատճառ է նաև քրեական օրենսդրության անկատարությունը:

---

[1] Տե՛ս Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի պետ Ա.Անտոնյանի՝ 2024 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ 17/19/179401-24 գրությունը, էջեր 1-2, (հասանելի է https://e-request.am/hy/e-letter/check?trackingC%D6%85de=PL59-3A9F-EE29-41B6 հղումով 25.01.2025թ. դրությամբ):

Քրեական օրենսդրության անկատարությունը ոչ միայն հանգեցնում է քրեական ենթամշակույթի դեմ քրեաիրավական պայքարի արդյունավետության անկման, այլ նաև հեղինակազրկում է օրենքը և իրավակիրառ մարմիններին:

Քրեական ենթամշակույթի դեմ արդյունավետ քրեաիրավական պայքար մղելու տեսանկյունից խնդրահարույց է քրեական ենթամշակույթ կրող խմբավորումը և գողական աշխարհը նույնացնելը, քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակը պահպանողի հասկացության ներկայիս ձևակերպումը, գողական աշխարհ ստեղծելը քրեականացնելը, քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ տալը, գողական աշխարհի հավաք կազմակերպելը, դրան մասնակցելը, գողական աշխարհ բռնության, սպառնալիքի կամ հարկադրանքի այլ եղանակով ներգրավելը՝ որպես օբյեկտիվ կողմի առանձին դրսևորումներ, գործող Օրենսգրքում նախատեսելու անհրաժեշտությունը, գործող Օրենսգրքի 322-325-րդ հոդվածներով նախատեսված հանցակազմերի (այսուհետ նաև՝ քրեական ենթամշակույթին առնչվող հանցակազմեր) որակյալ հատկանիշների ներկայիս ձևակերպումը, այդ հոդվածներում հետհանցավոր դրական վարքագիծ դրսևորելու դեպքում հանցանք կատարած անձանց քրեական պատասխանատվությունից ազատող խրախուսական նորմեր նախատեսելու հարցը և մի շարք այլ հարցեր:

Վերոգրյալը պայմանավորում է ընտրված թեմայի արդիականությունը:

Ընտրված թեմայի արդիականությունը հիմնավորվում է նաև համեմատաբար քիչ ծավալի հետազոտությունների առկայությամբ, որոնք անմիջականորեն նվիրված են քրեական ենթամշակույթի դեմ պայքարին առնչվող քրեաիրավական կարգավորումներին:

**Հետազոտության օբյեկտը և առարկան:** Սույն հետազոտության օբյեկտն այն հասարակական հարաբերություններն են, որոնք ծագում են քրեական ենթամշակույթին առնչվող հանցակազմերով նախատեսված արարքների համար պատասխանատվությունը կարգավորող քրեաիրավական նորմերի կիրառման ոլորտում:

Հետազոտության առարկա են կազմակերպված հանցավորության դեմ պայքարին միտված Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերը, քրեական ենթամշակույթին առնչվող հանցակազմերով նախատեսված արարքների համար պատասխանատվությունը կարգավորող քրեաիրավական նորմերը, քրեական ենթամշակույթին առնչվող արարքների և կազմակերպված հանցավորության

այլ դրսևորումների համար պատասխանատվություն նախատեսող արտասահմանյան որոշ երկրների քրեական օրենսդրությունը, քրեական ենթամշակույթին առնչվող հանցակազմերի վերաբերյալ վիճակագրական տվյալները, քրեական ենթամշակույթին առնչվող արարքների և կազմակերպված հանցավորության այլ դրսևորումների վերաբերյալ իրավակիրառ պրակտիկան, այդ թեմատիկայով գիտական աշխատությունները:

**Հետազոտության նպատակը և խնդիրները:** Հետազոտության նպատակը քրեական ենթամշակույթին առնչվող քրեաիրավական նորմերի խոր վերլուծությունն է, դրանում առկա հակասությունների, թերությունների և բացթողումների բացահայտումը, օրենսդրական և իրավակիրառ մակարդակներում քրեական ենթամշակույթի դեմ քրեաիրավական հակազդեցության արդյունավետության բարձրացմանն ուղղված, գիտականորեն հիմնավորված քրեաիրավական միջոցների համակարգի մշակումը:

Այդ նպատակին հասնելու համար՝ առաջ են քաշվել հետևյալ խնդիրները.

- հետազոտել քրեական ենթամշակույթի տարածվածության աստիճանը հայաստանյան հասարակությունում,
- քննարկել օրենսդրական մակարդակում գողական խոսվածքի՝ գողական աշխարհում կիրառվող եզրույթների օգտագործման թույլատրելիությունը,
- քննարկել գործող Օրենսգրքի Ընդհանուր մասի որոշ ինստիտուտներում քրեական ենթամշակույթին առնչվող հատուկ իրավակարգավորումներ սահմանելու անհրաժեշտությունը,
- հիմնավորել քրեական ենթամշակույթին առնչվող հանցակազմերը նախատեսելու անհրաժեշտությունը,
- քննարկել գողական աշխարհ և քրեական ենթամշակույթ կրող խմբավորում եզրույթների հարաբերակցությունը,
- իրավական վերլուծության ենթարկել քրեական ենթամշակույթին առնչվող հանցակազմերը,
- իրականացված հետազոտության հիման վրա առաջարկություններ մշակել՝ ուղղված քրեական ենթամշակույթի դեմ պայքարի քրեաիրավական միջոցների համակարգի կատարելագործմանը:

**Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը:** Հայրենական իրավաբանական գիտության մեջ քրեական ենթամշակույթին անդրադարձել են Տ.Սիմոնյանը, Ա.Գաբուզյանը, Հ.Խաչիկյանը, Ա.Մարգարյանը և այլոք:

Այնուամենայնիվ, վերջիններիս աշխատությունները հրապարակվել են մինչև 2020 թվականի հունվարի 22-ին ընդունված Օրենքի ուժի մեջ մտնելը և դրանցում քրեական ենթամշակույթն ուսումնասիրված է հիմնականում կրիմինոլոգիական տեսանկյունից:

Քրեական ենթամշակույթի դեմ պայքարի քրեաիրավական տարբեր խնդիրներին ժամանակակից քրեական իրավունքի գիտության մեջ անդրադարձել են Յու.Գոլիկը, Ժ.Վիդենկինան, Վ.Բիչկովը, Ս.Բելոցերկովսկին, Վ.Մորոզովը, Ա.Ռոժնովը և այլոք: Այնուամենայնիվ, հարկ է նկատել, որ վերջիններիս հետազոտությունների իրավական հիմքերի և գործող Օրենսգրքի իրավակարգավորումների միջև առկա տարբերություններով պայմանավորված, դրանք չեն կարող դառնալ գործող Օրենսգրքով նախատեսված, քրեական ենթամշակույթին առնչվող քրեաիրավական նորմերի ամբողջ համակարգի համար տեսական հիմք:

Հայրենական իրավաբանական գրականության մեջ քրեական ենթամշակույթի դեմ պայքարի քրեաիրավական առանձին խնդիրներին անդրադարձել են Ս.Առաքելյանը, Պ.Մկրտչյանը, Ա.Գասպարյանը:

Քրեական ենթամշակույթին առնչվող հանցակազմերի քրեաիրավական բնութագրի համակարգային գիտագործնական մեկնաբանություններ իրականացրել է Կ.Բիշարյանը, սակայն, նախկին Օրենսգրքի գործողության պայմաններում, որից հետո մոտ 5 տարի քրեական ենթամշակույթին առնչվող քրեաիրավական գործիքակազմին վերաբերող հիմնահարցերին համակարգային անդրադարձ չի կատարվել: Բացի դրանից, վերջինիս աշխատությունն ուղղված էր առավելապես նախկին Օրենսգրքով նախատեսված քրեական ենթամշակույթին առնչվող հանցակազմերի մեկնաբանությանը, այլ ոչ թե դրանց կատարելագործմանն ուղղված առաջարկություններ ներկայացնելուն:

Այսպիսով, քրեական ենթամշակույթի դեմ պայքարի քրեաիրավական վիճելի հիմնախնդիրների գիտական մշակվածության մակարդակը մնում է անբավարար, շատ հարցեր դեռևս մնում են չպարզաբանված կամ առկա է այլ լուծումներ ներկայացնելու անհրաժեշտություն, ինչը պահանջում է այդ հիմնախնդիրների խորը վերլուծություն և արդյունքում անհրաժեշտ առաջարկությունների ներկայացում՝ քրեական ենթամշակույթի դեմ քրեաիրավական առավել արդյունավետ պայքար մղելու համար:

**Հետազոտության իրավական հիմքը:** Հետազոտության իրավական հիմքն են Հայաստանի Հանրապետության՝ 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված քրեական օրենսգիրքը, 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված քրեական

օրենսգիրքը և այլ նորմատիվ իրավական ակտերը, արտասահմանյան երկրների քրեական օրենսդրությունները (Վրաստան, Ռուսաստանի Դաշնություն, Ուկրաինա, Իտալիա, Ֆրանսիայի Հանրապետություն, Իսպանիայի Թագավորություն, Շվեյցարական Համադաշնություն, Գերմանիայի Դաշնային Հանրապետություն և այլն):

**Հետազոտության տեսական հիմքը:** Հետազոտության տեսական հիմքը քրեական իրավունքի, կրիմինոլոգիայի, ինչպես նաև հետազոտության թեմային առնչվող մասով սոցիոլոգիայի գիտական աշխատություններն են:

**Հետազոտության փորձառնական հիմքը:** Հետազոտության փորձառնական հիմք են կազմել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, Սահմանադրական, Վճռաբեկ, Վերաքննիչ քրեական և առաջին ատյանի դատարանների մոտ 30 դատական ակտեր, իրավաբանական համայնքի ներկայացուցիչների շրջանակում անցկացված հարցման արդյունքները: Հետազոտության հիմք է կազմել նաև հեղինակի՝ ընդհանուր առմամբ մոտ վեցամյա աշխատանքային փորձը ՀՀ Վճռաբեկ դատարանի աշխատակազմում և ՀՀ Արդարադատության նախարարությունում:

**Հետազոտության մեթոդաբանական հիմքը:** Հետազոտության ընթացքում կիրառվել են հարցման, անալիզի, սինթեզի, համեմատահիրավական, համակարգակառուցվածքային և այլ մեթոդներ, կատարվել է դատական ակտերի ուսումնասիրություն:

**Հետազոտության գիտական նորույթը:** Հետազոտության գիտական նորույթն այն է, որ սույն ատենախոսության շրջանակում առաջին անգամ համակարգված անդրադարձ է կատարվել քրեական ենթամշակույթի դեմ պայքարի քրեաիրավական գործիքակազմի գրեթե բոլոր խնդիրներին, ընդ որում, շատ հարցերի նկատմամբ դրսևորելով նոր մոտեցումներ:

Ատենախոսական հետազոտության գիտական նորույթը հաստատում են **պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները**, որոնք հանգում են հետևյալին.

1. Հայաստանյան հասարակության վրա քրեական ենթամշակույթի ազդեցությունը, դրա դրսևորումների բազմազանությունը և տարածվածությունը վկայում են քրեական ենթամշակույթի դրսևորումների վտանգավորության բարձր աստիճանի մասին: Նման պայմաններում, առանց քրեաիրավական գործիքակազմի, բացառապես իրավական այլ միջոցներով (օրինակ՝ վարչական իրավունքի շրջանակում վարչական տույժերի կիրառմամբ, քաղաքացիական իրավունքի շրջանակում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմամբ, քրեակատարողական իրավունքի

շրջանակում տույժի միջոցների կիրառմամբ) քննարկվող ենթամշակույթի դեմ պայքար մղելն անարդյունավետ է: Հետևաբար, քրեական ենթամշակույթի դեմ արդյունավետ իրավական պայքար մղելու կարևոր գրավական է քրեաիրավական գործիքակազմը:

2. Օրենսդրական մակարդակում գողական խոսվածքի՝ գողական աշխարհում կիրառվող եզրույթների օգտագործումը թույլատրելի է միայն որպես վերջին՝ բացառիկ միջոցը (ultima ratio), երբ գրական խոսքում առկա չեն քրեական ենթամշակույթին վերաբերող երևույթների և կարգավիճակների էությունը նույնությամբ արտահայտող եզրույթներ և միայն այն դեպքում, երբ այդ եզրույթները մարդու պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող բնույթ չունեն:

3. Օրենսդրի կողմից գողական աշխարհը և քրեական ենթամշակույթ կրող խմբավորումը նույնացնելը և այդ եզրույթները որպես հոմանիշներ օգտագործելն ընդունելի չէ, իսկ նշված եզրույթներից առավել նպատակահարմար է գողական աշխարհ եզրույթի կիրառումը:

Միևնույն ժամանակ, գործող Օրենսգրքի 323-րդ հոդվածի 3-րդ մասում տրված քրեական ենթամշակույթ կրող խմբավորման (գողական աշխարհ) հասկացությունն անհրաժեշտ է խմբագրել և շարադրել հետևյալ կերպ. Սույն գլխի իմաստով՝ գողական աշխարհ է համարվում քրեական աստիճանակարգությամբ ու միջանձնային հիերարխիկ հարաբերություններով օժտված անձանց միավորումը, որը գործում է գողական օրենքի վրա հիմնված վարքագծի կանոնների համաձայն, և որի նպատակը հանցագործություն կատարելն է կամ գողական աշխարհում ունեցած հեղինակության կամ բռնության, բռնություն գործադրելու սպառնալիքի, շանտաժի, հարկադրանքի այլ եղանակի կամ անօրինական այլ գործողությունների միջոցով հանրային կամ մասնավոր հարցերին առնչվող վեճերը (խնդիրները) լուծելը կամ անօրինական օգուտ կամ այլ առավելություն ստանալը:

4. Բացակայում է գողական աշխարհ ստեղծելը քրեականացնելու անհրաժեշտությունը, հետևաբար գործող Օրենսգրքի 323-րդ հոդվածի 1-ին մասը՝ գողական աշխարհը ստեղծելու մասով, անհրաժեշտ է ուժը կորցրած ճանաչելը:

5. Գողական աշխարհին չանդամակցող անձի կողմից գողական աշխարհի գործունեությանը ներգրավված լինելու բոլոր դրսևորումների համար միասնական մոտեցում նախատեսելու անհրաժեշտությամբ պայմանավորված և հաշվի առնելով գողական աշխարհին չանդամակցող

անձի կողմից գողական աշխարհի գործունեությանը ներգրավված լինելուն ուղղված արարքների հանրային վտանգավորության նվազ աստիճանը՝ գողական աշխարհը ղեկավարելու և դրան մասնակցելու համեմատ, անհրաժեշտ է գողական աշխարհի հետապնդած նպատակների իրականացմանը ներգրավված լինելու փոխարեն քրեական պատասխանատվություն նախատեսել գողական աշխարհի գործունեությանը ներգրավված լինելու համար և այն նախատեսել առանձին հոդվածով՝ գործող Օրենսգրքի 324.1-ին հոդվածով, որպես ինքնուրույն հանցակազմ՝ դրա համար սահմանելով գործող Օրենսգրքի 323-324-րդ հոդվածներից մեղմ պատիժ, մասնավորապես՝ առաջարկվող հոդվածի 1-ին մասում որպես պատիժ նախատեսելով ազատազրկում՝ երեքից վեց տարի ժամկետով, իսկ 2-րդ մասում՝ ծանրացնող հանգամանքների առկայության դեպքում՝ ազատազրկում՝ չորսից ութ տարի ժամկետով:

6. Գործող Օրենսգրքի 322-րդ հոդվածի 2-րդ մասն անհրաժեշտ է շարադրել հետևյալ կերպ. Քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ պահպանող է համարվում այն անձը, որը տնօրինում է գողական աշխարհի միջոցով ստացված անօրինական օգուտը, կազմակերպում է գողական աշխարհի հավաք, մասնակցում դրան, կազմակերպում կամ իրականացնում է գույքի հավաքագրում (այդ թվում՝ մոլախաղերի միջոցով), տալիս է քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ, լուծում է հանրային կամ մասնավոր հարցերին առնչվող վեճեր (խնդիրներ) կամ կատարում է այդպիսի կարգավիճակից բխող այլ արարքներ::

7. Գործող Օրենսգրքի 322-րդ հոդվածի 3-րդ մասն ավելորդ խոչընդոտ է քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ ստացողների դեմ արդյունավետ քրեաիրավական պայքար մղելու գործում, հետևաբար այն անհրաժեշտ է ուժը կորցրած ճանաչել:

**Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը:** Հետազոտության տեսական նշանակությունը կայանում է նրանում, որ այն հայրենական քրեական իրավունքում քրեական ենթամշակույթի դեմ պայքարի վերաբերյալ կատարված եզակի համալիր հետազոտություն է, որը զարգացնում է քրեական իրավունքի տեսական դրույթները, և որի արդյունքները կարող են օգտագործվել հետագա գիտական ուսումնասիրություններում:

Հետազոտության գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ դրա արդյունքները կարող են լինել գիտական հիմք քրեական օրենսդրության հետագա կատարելագործմանն ուղղված իրավաստեղծ գործունեության,

իրավակիրառ պրակտիկայի, ուսումնական գործընթացի համար:

**Հետազոտության արդյունքների արժանահավատության աստիճանը:** Հետազոտության արդյունքների արժանահավատության աստիճանն ապահովված է հեղինակի կողմից միջազգային իրավական ակտերի, հայրենական և արտասահմանյան քրեական օրենսդրությունների նորմերի, հետազոտության թեմայով գիտական աշխատությունների, վիճակագրական տվյալների, դատական ակտերի օգտագործմամբ, հաստատված է գիտահետազոտական, կրթական գործընթացում հետազոտությունների արդյունքների ներդրմամբ:

**Հետազոտության արդյունքների փորձարկումը:** Ատենախոսության հիմնական դրույթները և եզրահանգումները քննարկվել են Երևանի պետական համալսարանի քրեական իրավունքի ամբիոնում, զեկուցվել են Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների գիտական նստաշրջաններում, տեղ են գտել հեղինակի հրապարակած 10 գիտական հոդվածներում:

Իրականացված հետազոտության արդյունքները, դրանց վրա հիմնված հետևությունները և առաջարկությունները ներդրվել են Երևանի պետական համալսարանի քրեական իրավունքի ամբիոնի գիտահետազոտական, կրթական գործընթացում:

**Ատենախոսության կառուցվածքը:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, որոնք ներառում են ութ պարագրաֆ, եզրակացությունից, օգտագործված իրավական ակտերի և գրականության ցանկից, երկու հավելվածից:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության օբյեկտը և առարկան, նպատակը և խնդիրները, հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը, հետազոտության իրավական, տեսական, փորձառնական, մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության արդյունքների արժանահավատության աստիճանը և փորձարկումը, ատենախոսության կառուցվածքը:

Ատենախոսության՝ «Քրեական ենթամշակույթի տարածվածությունը Հայաստանի Հանրապետությունում և դրա դեմ քրեաիրավական պայքարի

ընդհանուր հիմնախնդիրները» վերտառությամբ առաջին գլուխը բաղկացած է չորս պարագրաֆից:

**«Քրեական ենթամշակույթի տարածման միտումները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ 1.1 պարագրաֆում՝** ուսումնասիրվել է հայաստանյան հասարակության վրա քրեական ենթամշակույթի ազդեցությունը, դրա դրսևորումների բազմազանությունը և տարածվածությունը:

**«Քրեական ենթամշակույթը բնութագրող եզրույթների օրենսդրական ամրագրումը» վերտառությամբ 1.2 պարագրաֆում** ուսումնասիրվել է հանցավոր ենթամշակույթ և քրեական ենթամշակույթ եզրույթների հարաբերակցությունը, օրենսդրական մակարդակում գողական խոսվածքի՝ գողական աշխարհում կիրառվող եզրույթների օգտագործման թույլատրելիությունը:

**«Քրեական օրենսգրքի ընդհանուր մասում քրեական ենթամշակույթին առնչվող իրավակարգավորումների նախատեսման հիմնախնդիրը» վերտառությամբ 1.3 պարագրաֆում** ուսումնասիրվել է քրեական օրենսգրքի ընդհանուր մասի որոշ ինստիտուտներում, այդ թվում նաև՝ քրեական օրենքով նախատեսված արարքը ՀՀ տարածքից դուրս կատարելու դեպքում քրեական օրենքի գործողությունը, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը կարգավորող իրավանորմերում քրեական ենթամշակույթին առնչվող հատուկ իրավակարգավորումներ սահմանելու անհրաժեշտությունը:

**«Քրեական ենթամշակույթին առնչվող հանցակազմեր նախատեսելու անհրաժեշտությունը» վերտառությամբ 1.4 պարագրաֆում** ուսումնասիրվել է ՀՀ նախկին և գործող քրեական օրենսգրքերում քրեական ենթամշակույթին առնչվող հանցակազմեր նախատեսելու անհրաժեշտությունը և առանց դրանց քրեական ենթամշակույթի դեմ արդյունավետ քրեաիրավական պայքար մղելու հնարավորությունը:

**Երկրորդ գլուխը՝ «Քրեական ենթամշակույթին առնչվող հանցատեսակների քրեաիրավական բնութագիրը»** վերտառությամբ, բաղկացած է չորս պարագրաֆից:

**«Քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակին կամ քրեական ենթամշակույթին առնչվելու համար քրեական պատասխանատվություն նախատեսող հանցակազմերի օբյեկտիվ հատկանիշները» վերտառությամբ 2.1 պարագրաֆում** ուսումնասիրվել է քրեական ենթամշակույթին առնչվող հանցակազմերի օբյեկտը, գողական

աշխարհ և քրեական ենթամշակույթ կրող խմբավորում եզրույթների հարաբերակցությունը, նշված հանցակազմերի օբյեկտիվ կողմերը, բացասական (նեգատիվ) հատկանիշները, գողական աշխարհին կամ դրա ներկայացուցչին բանավոր, գրավոր կամ արտահայտման այլ միջոցներով հրապարակայնորեն աջակցություն արտահայտելու համար քրեական պատասխանատվություն նախատեսելու անհրաժեշտությունը, գողական աշխարհի գործունեությանը ներգրավված լինելու դեպքում քրեական պատասխանատվությունը բացառող հատուկ նորմ նախատեսելու անհրաժեշտությունը:

**«Քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակին կամ քրեական ենթամշակույթին առնչվելու համար քրեական պատասխանատվություն նախատեսող հանցակազմերի սուբյեկտիվ հատկանիշները» վերտառությամբ 2.2 պարագրաֆում** ուսումնասիրվել է քրեական ենթամշակույթին առնչվող հանցակազմերի սուբյեկտիվ կողմը, սուբյեկտը, քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակը պահպանող, քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ստացած հասկացությունները:

**«Քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակին կամ քրեական ենթամշակույթին առնչվելու համար քրեական պատասխանատվություն նախատեսող հանցակազմերի որակյալ հատկանիշները» վերտառությամբ 2.3 պարագրաֆում** ուսումնասիրվել է քրեական ենթամշակույթին առնչվող որոշ հանցակազմերում նախատեսված որակյալ հատկանիշները (ծանրացնող հանգամանքները), քրեական ենթամշակույթին առնչվող մյուս հանցակազմերում որակյալ հատկանիշները (ծանրացնող հանգամանքները) նախատեսելու անհրաժեշտությունը:

**«Հետհանցավոր դրական վարքագիծ դրսևորելու դեպքում քրեական ենթամշակույթին առնչվող հանցանք կատարած անձանց քրեական պատասխանատվությունից ազատելը» վերտառությամբ 2.4 պարագրաֆում** ուսումնասիրվել է քրեական ենթամշակույթին առնչվող հանցակազմերից յուրաքանչյուրի դեպքում հետհանցավոր դրական վարքագիծ դրսևորելու դեպքում անձանց քրեական պատասխանատվությունից ազատելու նպատակահարմարությունը, դրա իրականացման համար անհրաժեշտ կառուցակարգերը և պայմանները:

**Ատենախոսության եզրակացությունում**, ի լրումն պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթների, ներկայացվել են հետևյալ հիմնական

առաջարկությունները և եզրահանգումները՝

1. Հայաստանի Հանրապետությունում քրեական ենթամշակույթը՝ որպես սոցիալական երևույթ, ունի բազմամյա պատմություն, որի ընթացքում այն, ենթարկվելով որոշակի փոփոխությունների, շարունակում է պահպանել իր գոյությունը և դեռևս չի զիջում իր դիրքերը:

Հայաստանի Հանրապետությունում քրեական ենթամշակույթը տարածում ունի հասարակության տարբեր շերտերում: Քրեական ենթամշակույթը, թեև, առավելապես տարածված է քրեակատարողական հիմնարկներում ազատությունից զրկված անձանց շրջանում, սակայն դրա ազդեցությունը սահմանափակված չէ միայն վերոնշյալ սուբյեկտների շրջանակով: Այն իր տարածումն է գտել նաև հասարակության այլ շերտերում, այդ թվում նաև՝ անչափահասների շրջանում, ՀՀ Զինված ուժերում:

2. Հանցավոր ենթամշակույթ և քրեական ենթամշակույթ եզրույթները համարժեք չեն: Հանցավոր ենթամշակույթը շատ ավելի լայն երևույթ է և իր մեջ, ի թիվս այլնի, ներառում է նաև քրեական ենթամշակույթը, այլ կերպ՝ հանցավոր ենթամշակույթը և քրեական ենթամշակույթը հարաբերակցվում են որպես ամբողջ և մաս: Այսինքն, քրեական ենթամշակույթն առավել համընդգրկուն երևույթի՝ հանցավոր ենթամշակույթի բաղկացուցիչ մասն է միայն, դրա տարրերից մեկը:

Հետևաբար, օրենսդիրը, գործող Օրենսգրքում հանցավոր ենթամշակույթ և քրեական ենթամշակույթ եզրույթները միաժամանակ կիրառելով, թույլ չի տվել Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջի խախտում, այլ կերպ՝ օրենսդիրը վերը նշված երկու եզրույթները չի կիրառել միևնույն միտքն արտահայտելիս:

3. Գործող Օրենսգրքի 12-րդ հոդվածի 2-րդ մասում, համաձայն որի՝ ՀՀ միջազգային պայմանագրերով սահմանված դեպքերում քրեական օրենքով նախատեսված արարքը ՀՀ տարածքից դուրս կատարած ՀՀ քաղաքացիների, այդ թվում՝ երկքաղաքացիություն ունեցող անձանց, ինչպես նաև ՀՀ-ում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձանց, ՀՀ-ում փախստականի կարգավիճակով բնակվող, ապաստան հայցող կամ ապաստան ստացած անձանց քրեական պատասխանատվության հարցը լուծվում է ՀՀ քրեական օրենսգրքով՝ անկախ արարքը կատարելու վայրի պետության տարածքում այն հանցանք համարվելուց, անհրաժեշտ է լրացում կատարել՝ ի լրումն Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված դեպքերի՝ թվարկվելով նաև գործող Օրենսգրքի 322-325-րդ հոդվածներով նախատեսված արարքները:

4. Գողական աշխարհի հավաք կազմակերպելը կամ դրան մասնակցելը՝ որպես օբյեկտիվ կողմի առանձին դրսևորումներ, գործող Օրենսգրքում նախատեսելու անհրաժեշտությունը բացակայում է:

5. Գողական աշխարհ բռնության, սպառնալիքի կամ հարկադրանքի այլ եղանակով ներգրավելն առանձին նախատեսելն ընդունելի չէ, հետևաբար անհրաժեշտ է հրաժարվել այդպիսի մոտեցումից՝ ուժը կորցրած ճանաչելով գործող Օրենսգրքի 324-րդ հոդվածի 2-րդ մասը և դրա հետ կապակցված այլ իրավակարգավորումները:

6. Գործող Օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիան անհրաժեշտ է խմբագրել և շարադրել հետևյալ կերպ. Գողական աշխարհի անդամին, գողական աշխարհի գործունեությանը ներգրավված անձին կամ քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ ունեցող անձին դիմելը՝ նրա անօրինական ազդեցությունն օգտագործելու միջոցով գույքային կամ ոչ գույքային օգուտ կամ այլ առավելություն ստանալու կամ իրական կամ ենթադրյալ իրավունքն իրականացնելու համար, կամ գողական աշխարհի անդամին, գողական աշխարհի գործունեությանը ներգրավված անձին կամ քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ ունեցող անձին դիմելու արդյունքում նրանց անօրինական ազդեցությունն օգտագործելու միջոցով գույքային կամ ոչ գույքային օգուտ կամ այլ առավելություն ստանալը կամ իրական կամ ենթադրյալ իրավունքն իրականացնելը:

7. Քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ (օրենքով գող կամ քրեական հեղինակություն) եզրույթի փոխարեն առավել տեղին է Քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ (Օրենքով գող, «պոլոժենեց» (положенец), «զոն նայող» և այլն) եզրույթի կիրառումը: Միևնույն ժամանակ, ավելորդ կրկնաբանությունից խուսափելու նպատակով՝ առավել նպատակահարմար է գործող Օրենսգրքի 322-րդ հոդվածի 1-ին մասում կիրառել Քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ (Օրենքով գող, «պոլոժենեց» (положенец), «զոն նայող» և այլն) ձևակերպումը, իսկ այլ իրավանորմերում օգտագործել միայն Քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ ձևակերպումը:

8. Գործող Օրենսգրքի 323-324-րդ հոդվածներում նախատեսված հանցակազմի որակյալ հատկանիշներն անհրաժեշտ է խմբագրել և շարադրել հետևյալ կերպ. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) ձերբակալվածներին կամ կալանավորվածներին պահելու վայրում կամ քրեակատարողական հիմնարկում կամ ձերբակալված, կալանավորված կամ

քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող անձի կողմից,

2) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով,

3) զորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում կամ զինված ուժերում կամ այլ զորքերում ծառայողի կողմից,

4) անչափահասի ներգրավմամբ կամ

5) քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ ունեցող անձի կողմից:

Միևնույն ժամանակ, գործող Օրենսգրքի 324.1-ին հոդվածում ևս անհրաժեշտ է նախատեսել հանցակազմի՝ վերը նշված ծանրացնող հանգամանքները, բացառությամբ քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ ունեցող անձի կողմից արարքը կատարելուց:

9. Եզրակացությունների մաս է կազմում աշխատանքի հավելվածում ներկայացված Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը:

**Ատենախոսության 1-ին հավելվածում** ներկայացվել է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, որով, ի թիվս այլնի, առաջարկվել է՝

- ՀՀ քրեական օրենսգրքի 323-րդ հոդվածը (քրեական ենթամշակույթ կրող խմբավորում ստեղծելը կամ ղեկավարելը) խմբագրել և դրանով քրեական պատասխանատվություն նախատեսել գողական աշխարհը ղեկավարելու համար, եթե բացակայում են հանցավոր կազմակերպություն ստեղծելու կամ ղեկավարելու հանցանքի հատկանիշները,

- ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածը (քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը մասնակցելը կամ ներգրավելը) խմբագրել և դրանով քրեական պատասխանատվություն նախատեսել գողական աշխարհին մասնակցելու համար, եթե բացակայում են հանցավոր կազմակերպությանը մասնակցելու հանցանքի հատկանիշները,

- ՀՀ քրեական օրենսգիրքը լրացնել 324.1-ին հոդվածով, որով քրեական պատասխանատվություն նախատեսել գողական աշխարհի գործունեությանը ներգրավված լինելու համար,

- ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածում Քրեական ենթամշակույթ կրող խմբավորման մասնակցին կամ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձին դիմելը՝ նրա անօրինական

ազդեցությունն օգտագործելու միջոցով նյութական կամ ոչ նյութական օգուտ կամ այլ առավելություն ստանալու կամ իրական կամ ենթադրյալ իրավունքն իրականացնելու համար բառերը փոխարինել Գողական աշխարհի անդամին, գողական աշխարհի գործունեությանը ներգրավված անձին կամ քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ ունեցող անձին դիմելը՝ նրա անօրինական ազդեցությունն օգտագործելու միջոցով գույքային կամ ոչ գույքային օգուտ կամ այլ առավելություն ստանալու կամ իրական կամ ենթադրյալ իրավունքն իրականացնելու համար, կամ գողական աշխարհի անդամին, գողական աշխարհի գործունեությանը ներգրավված անձին կամ քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ ունեցող անձին դիմելու արդյունքում նրանց անօրինական ազդեցությունն օգտագործելու միջոցով գույքային կամ ոչ գույքային օգուտ կամ այլ առավելություն ստանալը կամ իրական կամ ենթադրյալ իրավունքն իրականացնելը բառերով։

**Ատենախոսության 2-րդ հավելվածում** ներկայացվել է իրավաբանական համայնքի ներկայացուցիչների շրջանակում անցկացված հարցման արդյունքները։

**Ատենախոսության դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.**

1.Babakhanyan A. Some issues of the corpus delicti of "participation or involvement in a criminal subcultural group", Պետություն և իրավունք, N 3 (94), 2022, 178-186 էջեր:

2. Բաբախանյան Ա. Քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հետապնդած նպատակների իրականացմանը ներգրավված լինելու որոշ հիմնահարցեր, Պետություն և իրավունք, N 1 (95), 2023, 118-129 էջեր:

3. Բաբախանյան Ա. Քրեական ենթամշակույթին առնչվող հատուկ հանցակազմեր նախատեսելու անհրաժեշտությունը, Բանբեր Արդարադատության ակադեմիայի, N 3 (13), 2024, 83-92 էջեր:

4. Բաբախանյան Ա. Քրեական ենթամշակույթ կրող խմբավորման (գողական աշխարհի) հասկացության և գողական աշխարհ ստեղծելը քրեականացնելու որոշ հիմնահարցեր, Պետություն և իրավունք, N 2 (99), 2024, 152-161 էջեր:

5. Բաբախանյան Ա. Քրեական ենթամշակույթի տարածման միտումները Հայաստանի Հանրապետությունում, Դատական իշխանություն, 7-9 (301-303), հուլիս-սեպտեմբեր 2024, 49-63 էջեր:

6. Բաբախանյան Ա. Քրեական ենթամշակույթը բնութագրող եզրույթների օրենսդրական ամրագրման որոշ հիմնահարցեր, Դատական իշխանություն, 10-12 (304-306), հոկտեմբեր-դեկտեմբեր 2024, 38-47 էջեր:

7. Բաբախանյան Ա. Գողական աշխարհի ղեկավար կազմի դեմ քրեաիրավական պայքարի որոշ հիմնահարցեր, Դատական իշխանություն, 1-3 (307-309), հունվար-մարտ 2025, 70-86 էջեր:

8. Բաբախանյան Ա. Գողական աշխարհի մասնակիցների և դրան առնչվող անձանց դեմ քրեաիրավական պայքարի որոշ հիմնահարցեր, Դատական իշխանություն, 4-6 (310-312), ապրիլ-հունիս 2025, 84-103 էջեր:

9. Բաբախանյան Ա. Քրեական օրենսգրքի ընդհանուր մասում քրեական ենթամշակույթին առնչվող իրավանորմերի ամրագրման որոշ հիմնահարցեր, Օրենքի պատվար, N 19, 2025, 7-19 էջեր:

10. Բաբախանյան Ա. Գողական աշխարհին առնչվող անձանց դիմելու որոշ հիմնահարցեր, Բանբեր Արդարադատության ակադեմիայի, N 1 (14), 2025, 97-103 էջեր:

## АРМАН АРСЕНОВИЧ БАБАХАНЯН
## УГОЛОВНО-ПРАВОВЫЕ ВОПРОСЫ БОРЬБЫ С КРИМИНАЛЬНОЙ СУБКУЛЬТУРОЙ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Криминальная субкультура как социальное явление имеет долгую историю в Республике Армения, в течение которой она, претерпев определенные изменения, продолжает сохранять свое существование и по-прежнему не уступает своих позиций, будучи широко распространенной в различных социальных слоях.

Влияние криминальной субкультуры на армянское общество, разнообразие и распространенность ее форм указывают на высокую степень опасности проявлений криминальной субкультуры, что оправдывает использование, в частности, инструментов уголовного права в ведении эффективной правовой борьбы с криминальной субкультурой.

Не недооценивая усилия компетентных государственных органов по ведению уголовно-правовой борьбы с криминальной субкультурой, тем не менее следует отметить, что уголовно-правовая борьба с криминальной субкультурой сегодня не может быть названа успешной, что также обусловлено несовершенством уголовного законодательства.

Точки зрения, изложенные в выполненной работе, связаны с универсальными представлениями и подходами к объекту исследования, в связи с чем были сделаны соответствующие выводы, а в некоторых случаях представлены предложения.

Обсуждая допустимость использования терминов, используемых в воровском мире, в воровской речи на законодательном уровне, был сделан вывод, что их использование допустимо только в качестве крайней, исключительной меры (ultima ratio), когда в литературной речи нет терминов, которые бы так же точно выражали сущность явлений и статусов, связанных с криминальной субкультурой, и только в том случае, когда эти термины не носят унизительного характера для чести и достоинства человека.

Изучив необходимость установления специальных правовых норм, касающихся криминальной субкультуры, в некоторых положениях общей части Уголовного кодекса, был сделан вывод о том, что в некоторых случаях необходимо установить специальные правовые нормы, касающиеся криминальной субкультуры, в то время как в других случаях отсутствие таких

правовых норм никоим образом не препятствует эффективной уголовно-правовой борьбе с криминальной субкультурой.

Изучив составы преступлений, связанных с организованной преступностью, в предыдущем и действующем Уголовных кодексах Республики Армения, был сделан вывод о необходимости предусмотреть составы преступлений, связанных с криминальной субкультурой, и о неэффективности ведения эффективной уголовно-правовой борьбы с криминальной субкультурой без них.

Была обсуждена взаимосвязь между понятиями «криминальная субкультурная группа» и «воровской мир», особенности понятия «лицо, занимающее высшее положение в преступной иерархии», необходимость криминализации создания воровского мира, предоставления высокого положения в преступной иерархии, организации собраний воровского мира, участия в них, привлечения членов воровского мира с помощью насилия, угроз или других средств принуждения как отдельных проявлений объективной стороны состава преступления, были также обсуждены текущие формулировки качественных признаков в составах преступлений, связанных с криминальной субкультурой, необходимость предусмотрения в этих статьях стимулирующих норм, освобождающих лиц, совершивших преступление, от уголовной ответственности в случае проявления положительного поведения после совершения преступления.

В результате был представлен ряд предложений, направленных на повышение эффективности уголовно-правовой борьбы с криминальной субкультурой, на основе которых был также представлен проект закона Республики Армения «О внесении изменений и дополнений в Уголовный кодекс Республики Армения».

Диссертация подготовлена на кафедре уголовного права юридического факультета ЕГУ. Результаты исследования отражены в 10 научных статьях, опубликованных автором. Ряд положений диссертации были представлены диссертантом в рамках докладов и научных докладов, представленных на кафедре.

ARMAN ARSEN BABAKHANYAN

# CRIMINAL-LEGAL ISSUES OF THE FIGHT AGAINST CRIMINAL SUBCULTURE IN THE REPUBLIC OF ARMENIA

Criminal subculture as a social phenomenon has a long history in the Republic of Armenia, during which it has undergone certain changes but continues to exist and remains widespread in various social layers.

The influence of criminal subculture on Armenian society, the diversity and prevalence of its forms indicate the high degree of danger of manifestations of criminal subculture, which in particular justifies the use of criminal legal instruments in the effective legal fight against criminal subculture.

Without underestimating the efforts of competent state authorities to fight criminal subculture through criminal legal measures, it should nevertheless be noted that the criminal legal fight against criminal subculture today cannot be called successful, which is also due to the imperfection of criminal legislation.

The views expressed in this work are based on universal ideas and approaches to the subject of research, and accordingly, relevant conclusions have been drawn and, in some cases, proposals have been made.

When discussing the admissibility of using terms used in the thieves' world, in thieves' speech at the legislative level, it was concluded that their use is permissible only as a last resort (ultima ratio), when there are no terms in literary speech that would equally accurately express the essence of phenomena and statuses associated with criminal subculture, and only in cases where these terms are not humiliating to human honor and dignity.

Having examined the need to establish special legal norms related to criminal subculture, in some provisions of the general part of the Criminal Code, it was concluded that in some cases it is necessary to establish special legal norms relating to criminal subculture, while in other cases the absence of such legal norms in no way hinders the effective criminal legal fight against criminal subculture.

After examining the definitions of crimes related to organized crime in the previous and current Criminal Codes of the Republic of Armenia, it was concluded that it is necessary to provide for corpus delicti related to criminal subculture and that it is ineffective to carry out an effective criminal legal fight against criminal subculture without them.

The relationship between the concepts of “criminal subculture group” and

“thieves' world” was discussed, as well as the features of the concept of “a person with the highest status in the criminal hierarchy” the need to criminalize the creation of the thieves' world, the granting of a high status in the criminal hierarchy, the organization of thieves' world meetings, participation in them, and the recruitment of members of the thieves' world through violence, threats, or other means of coercion as separate manifestations of the objective side of the corpus delicti, The current definitions of qualitative characteristics in the corpus delicti of crimes related to criminal subculture were also discussed, as was the need to include incentive provisions in these articles that would exempt persons who have committed a crime from criminal liability if they demonstrate positive behavior after committing the crime.

As a result, a number of proposals were put forward aimed at improving the effectiveness of criminal legal fight against criminal subculture, on the basis of which a draft of the law of the Republic of Armenia “On amendments and additions to the Criminal Code of the Republic of Armenia” was also presented.

The dissertation was prepared at the Chair of Criminal law of the Faculty of law of the YSU. The results of the study are reflected in 10 scientific articles published by the author. A number of provisions of the dissertation were presented by the candidate in the framework of scientific reports presented at the Chair of Criminal law of the Faculty of law of YSU.